

Կոմիտասի աշակերտներից՝ Սպ.Մելիքյանը շարունակել է իր մեծ ուսուցչի գործը, զրի է առել բազմաթիվ երգեր, ստեղծել դպրոցական դասագրքեր, մշակել սկզբունքներ, որոնք վճռական դեր են խաղացել հայ երգի ու երաժշտության մշակման, տարածման եւ ուսուցման ուղղությամբ:

Ժողովրդական երգի միջոցով մանուկի երաժշտական դաստիարակության գործը կազմակերպելը Կոմիտասի առաջ բաշած կարեւորագույն սկզբունքներից մեկն է: Կոմիտասի գաղափարների եւ գործի հետևորդները նրա սկսած գործը զարգացրին իրենց աշխատանքային գործունեության ծրագիր եւ սկսեցին իրագործել: Կոմիտասի մեթոդական դրույթներն իրենց մանկավարժական ու մեթոդական հիմքով այսօր էլ արդիական են:

Юзбашян Ю. В. — Музыкально-педагогическая мысль в Армении. Во все времена в жизни армянского народа музыка занимала почетное место. В статье дается исторический обзор о становлении и развитии армянской музыкальной педагогической мысли разных времен. Излагаются передовые взгляды армянских просветителей музыкального образования и воспитания.

ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆՍՏԱՆԻ ՎԱՆՔԸ

Հ.Ա. ՄԵԼԻՔՅԱՆ
Գ.Գ. ՄԱՐԳՍՅԱՆ

Վանաստանի վանքը միջնադարյան Հայաստանի Այրարատ Նահանգի նշանավոր հոգևոր ու կրթամշակութային կենտրոններից է: Հուշարձանի ավերակները գտնվում են Գառնիից շուրջ 12 կմ հարավ-արևմուտք, Իմիրզեկ (հիմում՝ Վանաստան) լճի ափին արևելյան եզրի անտառապատ լեռան լանջին: Համակառույցի կենտրոնում ա.Աստվածածին եկեղեցին է: Այն 13-րդ դարի հայկական ճարտարապետության եւ քանդակագործության ուշագրավ նմուշներից մեկն է: Եկեղեցու չափերն են՝ 11,7 . 8,8 մ.:

Ա.Աստվածածին եկեղեցին ներկայացնում է Հայաստանում լայնորեն տարածված գմբեթավոր սրահ տիպը: Միակ մուտքը արևմտյան կողմից է: Բոլոր ճակատներում, բացի արևմտյանից, բարձրացել են եռանկյունաձև հատույթի զույգ ավանդական խորշեր: Ներքստ, ուղղանկյունաձև դահլիճն արևելյան մասում ավարտվում է ավազ խորանով, որի երկու կողմերում ավանդատներն են: Եկեղեցու թմբուկը եղել է բազմանիստ եւ պսակվել նիստավոր վեղարով:

Դատելով պահպանված բեկորներից ա. Աստվածածին եկեղեցին ունեցել է ճոխ դեկորատիվ հարդարանք: Այդ են վկայում բեմառաջի, եռանկյունաձև խորշերի ու լուսամուտների պսակների ու պարակների, շքամուտքի, թմբուկի նիստերի վարդակների եւ մյուս հատվածների մշակումները:

Վանաստանի վանքը վաղուց ի վեր իր վրա է բեռնել հայագետների ուշադրությունը: Ղ. Ալիշանն է առաջինը, որ Այրարատ աշխարհի Մագազ գավառի հնությունների մասին խոսելիս, հիշատակում է «Իմիրզեկ կամ Միւրզիկ» ավերակ եկեղեցին¹:

1907-1908թթ. Մոսկովյան կայսերական հնագիտական ընկերության արշավախումբը եւ արեւելք ուսումնասիրել է բազմաթիվ նյութեր հայկական միջնադարյան հուշարձանների վերաբերյալ: Արշավախմբի ղեկավար Վ. Միստեի եւ Ծարտարապետ Տարագրողի հավաքած այդ նյութերը 1913 թ. հրատարակվեցին անվանի հայագետ Բուշուլյ - Հովհաննիսյանի կողմից: Այստեղ, Զեղվա ձորի մի շարք հուշարձանների վերաբերյալ նյութերի թվում տեղ են գտել նաեւ Վանաստանի հատակագիծը, մի քանի լուսանկար եւ արձանագրություններ²:

Հուշարձանի Վանաստան անվանումը վերականգնել է հայագիտության մեծ երախտավոր Գաբեգին Հովսեփյանը³: Տարբեր առիթներով Վանաստանին են անդրադարձել Հ. Օրբելին⁴ եւ Ն. Տոկրասկին⁵: Վանաստանի եւ նրա շրջակայքի մի քանի արձանագրություններ է քննարկել վիճաբան Ս. Ավագյանը⁶:

Հուշարձանի պեղումներից հայտնաբերված մի քանակի վերլուծությունն է կատարել Պ. Դոնապետյանը⁷: Վանաստանի վանքի գիտական ուսումնասիրության սկզբնավորողը հայագիտության անխոնջ մշակ Աշխարհբեկ Զալանթյանն է, որը 1912թ. Ն.Մատի համեմատարարությամբ պեղումներ է իրականացրել հնավայրում: Այդ պեղումների ժամանակ բացվել են ա. Աստվածածին եկեղեցին, նրան արեւմուտքից կցված գավիթը, հայտնաբերվել են բազմաթիվ արձանագրություններ, ճարտարապետական եւ քանդակագործական հետաքրքիր մանրամասեր ու բեկորներ: Այդ հայտնաբերումների եւ գտածոների վերաբերյալ Աշխ. Զալանթյանը հրապարակում է երկու հաշվետվություն⁸:

¹ Ղ. Ալիշան, Այրարատ, քննադատական Հայաստանայց, Վենետիկ, 1890, էջ 360: Ալիշանին հայտնի չէր Իմիրզեկի հին Վանաստան անունը, քանի որ մեկ այլ էջում նա բերում է Միստեի Երեւանում վկայությունը Խոր Վիրապ վանքի թեմի մեջ մտնող հոգևոր կենտրոնների՝ այդ թվում նաեւ Վանաստանի մասին, սակայն չնույնացնելով Վանաստանն ու Իմիրզեկը (նույն տեղում, էջ 440):

² Материалы по археологии Кавказа, вып. XIX, 1913, стр. 67-69.

³ Գ. Հովսեփյան, «Ժողովրդագր. և մշակ.», մի նմուշ Բ.Գ. իսկու հայ սովերյուրեան, Թիֆլիս, 1912, էջ3: Նույնի՝ Խաղարակյանը կամ Պոռշյանը Հայոց պատմության մեջ, մասն առաջին, Վաղարշապատ, 1928, էջ 66,80,250:

⁴ И. Орбели. Памятники армянского зодчества на острове Ахтамар, Избранные труды, т. I, М.

⁵ Н. Токаревский. Архитектура Армении IV-XIV вв., Ереван, 1961, стр. 338.

⁶ Ս. Ավագյան, Վիմակայն արձանագրությունների բաժանարարություն, Երեւան, 1978, էջ 272, 288-287, 340-342:

⁷ Պ. Դոնապետյան, Վանաստան գյուղի եկեղեցու բարձրարժեքի վախճան, ՊԲՀ, 1979, I, էջ 154-165:

⁸ А. А. Лорис-Калантар. Из поездки в Эриванскую губернию, Записки Вост. отд. Императорского Русского археологического общества, т. XXII, СПб, 1914, стр. 9-10. Предварительный отчет о поездке в Имирзек летом 1912 г., Известия императорской Академии Наук, 1913, стр. 127-130. Աշխ. Զալանթյանի հավաքած արձանագրությունները հեղինակների կողմից պատրաստվել են հրատարակության եւ շտապ լույս կտեսնեն:

Այս քաղաքային պետությունների շնորհիվ հայտնաբերել է վեց տասնյակից ավելի արձանագրություն, որոնք փորագրված են եղել հուշարձանի որմերին եւ հուշակոթողների վրա: Այս արձանագրությունների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել վանքի գործունեության ամենատարբեր ոլորտների մասին, հայտնի են դառնում վանքի հետ անմիջապես առնչվող անձնավորությունների անուններ, ճշտվում է վանական միաբանության առաջնորդների ցանկը:

Մի կարեւոր արձանագրություն է փորագրված եղել եկեղեցու շքամուտքի երկու կողմերում, բարավորին եւ տիմպանի քարի վրա, համաձայն որի վանքի հիմնադիրն ու առաջին վանահայրը տեր Դավիթն է⁹:

Եկեղեցու կառուցման ստույգ ժամանակը որոշելու համար կարեւոր փաստեր է հաղորդում տեր Դավթի մյուս արձանագրությունը՝ հայտնաբերված մոյնայե 1912թ. պեղումների միջին: Այստեղ Դավիթը հիշատակված է որպես հայ եկեղեցու Արարատյան թեմի առաջնորդ («ԱՌԱՋՆՈՐԴ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԵՎ ԴԱՎԻԹ»): Թեմի առաջնորդական նստավայրն էր նշանավոր Խոր Վիրապի վանքը, ուր, համաձայն հիշյալ վկայագրի, շինարարական մեծածավալ աշխատանքներ են կատարվել: Տեր Դավիթը կառուցել է վանքի Կաթողիկե եկեղեցին եւ պարսպապատերը: Հարկ է նշել, որ 13-րդ դարի 20-ական թվականներին Խոր Վիրապում իրականացված աշխատանքների մասին այս հետաքրքիր վկայությունը ցայտնի հայտնի միակ վիմագիր հիշատակությունն է:

Տեր Դավթի դեկավարությամբ կառուցվել է նաեւ Վանստանի ս. Աստվածածին եկեղեցին: Արձանագրության մեջ նշված է, որ Խոր Վիրապում եւ Վանստանում շինարարական աշխատանքները իրագործվել են «ԺԱՄԱՆԱԿԻ ԱԹԱՊԱԿ ԻՎԱՆԵԻ»:

Սկզբնաղբյուրներից հայտնի են Իվանե Ա. Չաքարյանի աթաբեկության տարիները՝ 1212-1227թթ.,¹⁰ ըստ այդմ պարզ է դառնում, որ Վանստանի վանքի հիմնադրումը եւ Խոր Վիրապում կատարված շինարարական աշխատանքները իրականացվել են հենց այդ թվականներին:

Ուշագրավ է արձանագրության վկայությունը Վանստանի վանքի հիմնադրման հանգամանքների մասին: Պարզվում է, որ ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել է հայոց եկեղեցու նշանավոր սրբություններից մեկի՝ Հացունյաց ս. Նշանի գետեղարան: Այս սրբության մասին արժեքավոր տեղեկություններ են պահպանվել հայ մատենագրության եւ մասնագիտական գրականության մեջ:¹¹ Պատմիչ Շապուհ Բագրատունին հաղորդում է, որ բյուզանդական Հերակլ կայսրը Պարսկաստան կատարած արշավանքից վերադառնալիս Սյունյաց Բյուրեղ Իշխանուհուն մվիրում է Բրիստոսի խաչելության խաչափայտի մի կտոր, որը հայտնի է Հացունյաց ս. նշան վանքի «ընդ դաշտն գոր Հացին ասեն»¹²: Այստեղ նրա կանգառի միջոցին «եկն այր մի միայնակեց, որ բնակել էր ի վերայ լեռին եւ եկեալ ասէ ցտիկինն. ով բարեպաշտուհի տիկին, որամայեց Աստուած բնակիլ սրբոյ նշանիլ պայմա տեղոյս»: Եվ սկսաւ եւ շինեաց տիկին տեղի վանաց սրբոյ նշանին եւ զնեաց գրեողն, որ Հացին կոչեն, եւ ըզուրնգն բերդին եւ ետ ի վանքն սրբոյ նշանին եւ ինքն զնեաց աշխարհն իրենանց»¹³: Ահա այս Հացունյաց¹⁴ դաշտի, բերդի կամ գյուղի անունով էլ անվանվել է սրբությունը:

Ավանդության հետագայում գրի առնված տարբերակներում Հացունյաց ս. նշանը կապվում է Սյունիքում՝ Արկազի ս. Խաչ վանքի, իսկ Կարինում՝ Խաչկավանքի հետ: Ա. Մահակյանը սուրբ խաչափայտի Արկազի ս. Խաչ վանքի տարբերակի բացակայությունը Ստեփանոս Օրբելյանի մոտ բացատրում է այն իրադրությամբ, որ «...այդ ժամանակաշրջանում խաչամասնիկի ձեռքբերման ներկա ավանդությունը իբրեւ Հացունյաց խաչի պատմություն վաղուց իր իրավունքի մեջ էր եւ ճանաչված ու հաստատված էր ազգային մատենագրության մեջ որպես գրավոր շրջանագրության նյութ»¹⁵: Այս բացատրությունը մեզ համար առնվազն անբացատրելի է, քանի որ Ստեփանոս Օրբելյանը ամենայն մանրամասնությամբ խոսում է այն բոլոր վանքերի մասին, որոնցում սուրբ մատուցներ են ամփոփված եղել (Թանահատ, Մամասի վանք եւ այլն):

Հարցին անուղղակի կարող է լույս սփռել Ստեփանոս Օրբելյանի ժամանակակից, Գլաձորի համալսարանի նշանավոր դոկտորանտ Եսայի ճեղքում վերագրվող 1284թ. ժողովածուի հիշատակարանը, ուր հեղինակը նշում է Հայաստան աշխարհի երեք նշանավոր սրբությունները (յեռանձեա յերոյրդունէն): Սրանցից առաջինը

⁹ Արձանագրություն մեջ հիշատակված են նաեւ Դավիթ վանուհոր հարազատները. հայրը (Գրիգոր), մայրը (Աղստ), պսակը (Հասանտին), եղբայրներից մեկը (Խալո, մյուսի անունը չի վերաձվում), որոնց համար տարբեր քանակությամբ պատարագներ են սահմանվել: Տեր Դավիթը հիշատակված է նաեւ վանքի մեկ այլ վիմագրում:

¹⁰ Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Երեւան, 1976, էջ 976:

¹¹ Այդ մասին առավել մանրամասն տես՝ Ա. Մահակյան, «Պատմության Հացունեաց խաչին» գլուխը եւ նրա տիպաբանությունը, ՊԲՀ, 1981, N4, Էջ 153-166: Նույնի՝ Հացունյաց անվանվող պատմությունը եւ նրա բանավոր տարբերակները, ՊԲՀ, 1982, N3, էջ 135-143:

¹² Հ. Անադյան, Հայոց անձնանունների բառարան, հ.1, Երեւան, 1942, էջ 146: Տես նաեւ՝ Դ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 14:

¹³ Պատմություն Անանուն Չրուցագրի. Կարծեցեալ Շապուհ Բագրատունի, թարգմանությունը գրաբարից, առաջաբանն ու ծանոթագրությունները՝ Մ. Հ. Դարբինյան - Մեմֆրյանի, Երեւան, 1971, էջ 67:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Ն. Արմեց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երեւան, 1987, էջ 262, 351: Տե՛ս նաեւ՝ Մ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երեւան, 1963, էջ 62: Պատմիչ Թովմա Արծրունին քանիցս հիշատակում է Հացուն (Հացին) բնակավայրը (Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Երեւան, 1985, էջ 140, 518):

¹⁶ Ա. Մահակյան, Հացունյաց անվանվող պատմությունը..., էջ 136-137:

համարում է. «հատեալն մասն ի կենդանարարն փայտէ աստուածեանն խաչէ, նշանն Հացունեաց»¹⁷: Մյուս երկու սրբություններն են Խոր Վիրապը եւ Նոյան տապանը:¹⁸

Կարծում ենք, որ Ստեփանոս Օրբելյանը քաջատեղյակ էր, որ խաչափայտի այս մասնիկը Սյունիքում չէ, այլ Այրարատյան հոգեւոր թեմում, ըստ վերոնշյալ արձանագրության՝ Վանստանի վանքում: Տարակուսելի է մնում այն պարագան, որ Վանստանում Հացունյաց ս. նշանի գետեղարան հանդիսացող եկեղեցին անվանակոթվել է ս. Աստվածածին, փոխանակ՝ ս. Խաչ կամ ս. նշան:

Վանստանի վանքի վիմագիր վկայությունները ցույց են տալիս, որ միաբանությունն առանձնակի ծագում է ապրել 13-րդ դարի երկրորդ կեսին, երբ վանահայր էր Գրիգոր վարդապետը: Նա եւ իր եղբայր Վարդանյանը ժամանակի մեծ մտածող, Արարատյան թեմի առաջնորդ Գրիգոր արքեպիսկոպոս Բջնեցու հոգեւոր որդիներն էին եւ աշակերտները:¹⁹

Վանստանի եւս երեք արձանագրություններում վկայված Գրիգոր վարդապետը 13-րդ դարի 70-80-ական թվականներին Խոր-Վիրապ եւ Վանստան վանքերի վանահայրն էր. «...ԱՌԱՋՆՈՐԴ ՎԻՐԱՊԵՆ ԵՎ ՍՈՒՐԲ ՈՒԽՏԻՍ ՎԱՆԸՍԱՆԱՅ...»: Գրիգորը եղբոր՝ Վարդանի²⁰ հետ մասնակցել են 1270թ. Չազավանի նշանավոր ժողովին, ուր հայոց աշխարհիկ (Խոշաք, Պոռշ, Մադուն, Մմբաւ) եւ հոգեւոր տերերը ընդունեցին մի շարք կանոններ, որոնք կարգավորում էին ժողովրդի եւ եկեղեցու սպասավորների հարաբերությունները²¹: Վարդան եւ Գրիգոր վարդապետների գործունեությունը հիմնականում կապված է եղել Խոր Վիրապի հետ, եւ այստեղ էլ կնքել են իրենց մահկանացուն:²²

1283թ. Գրիգոր վարդապետը սալարկել է տալիս Վանստանի ս. Աստվածածին եկեղեցին. «ՄԱԼԵՑԻ ՉԵԿԵՐՏԻՍ ՈՐ Ի ԲՆԷ ՉԷՐ ՍԱԼԱԾ...», նվերներ տալիս վանքին:

13-րդ դարի 70-80-ական թվականներին Վանստանի վանքի հովանավոր է հանդես գալիս ժամանակի նշանավոր ռազմական եւ քաղաքական գործիչ Մադուն Արծրունին, որը Չազավանի ժողովի կազմակերպիչներից մեկն էր: Նա Կայեն զավառի եւ Մահկանաբերդի տերն էր, Թիֆլիսի ամիրան: Մադունը որպես ԱԹԱԲԵԿ ԵՎ ԱՄԻՐՍՊԱՍԱԼԱՐ երեք անգամ (1278, 1283թթ.) հիշված է Վանստանի արձանագրություններում:

Համաձայն 1278թ. արձանագրության Մադուն իշխանը երկու ջաղացատեղ՝ իրենց առուններով եւ մարզ է մվիրում ս. Աստվածածին եկեղեցուն: Մեկ այլ դեպքում մվիրում է քսան դահեկան:

Որոշակի կարեւորություն է ներկայացնում Վանստանի եւ նրա շրջակայքի վարչական պատկանելության խնդիրը:

Գրիգոր վարդապետի 1283թ. արձանագրությունն սկսվում է հետեւյալ բառակապակցությամբ. «ՅԻՇԻԱՆ ՆՈՒԹԵԱՆ ՏԱՆՍ ՀԱՅՈՑ ԵՎ ՎՐԱՅ ԱԹԱՊԱԿ ԵՎ ԱՄԻՐՍՊԱՍԱԼԱՐ ՍԱԳՈՒՆԻՆ», ինչից կարելի է ենթադրել, որ Վանստանը եւ նրա շրջակա տարածքները մտնում էին Մադունի տիրույթների մեջ:

Այս տարածքները 9-10-րդ դդ. եղել են Բագրատունիների սեփականությունը: Նշյալ իրադրությունը, կապված Վանստանի մերձակայքում գտնվող Բեղվա կամ Գեղի ամրոցի հետ, փաստում է Հովհաննես Դրասխանակերտցին:²³ Պատահական չէ նաեւ Վանստանից ոչ հեռու գտնվող Բյովրի Կուլախ գյուղի վաղ միջնադարյան բազիլիկ եկեղեցու մոտ 1912թ. հայտնաբերված Աշոտ Բագրատունու կնոջ՝ Խոսրովանույշ թագուհու ընդարձակ արձանագրության առկայությունը՝ թվագրված 960 թվականով:²⁴

Երբ 12-րդ դարի վերջին եւ 13-րդ դարի սկզբին հայ-վրացական միացյալ ուժերը ազատագրում են Հայաստանը սելջուկներից, այս տարածքները անցնում է Իվանե Չաքարյանին, որի հրամանով էլ վանահայր Տեր Դավիթը կառուցում է ս. Աստվածածին եկեղեցին եւ շինարարական աշխատանքներ իրականացնում Խոր Վիրապում:

Բեղվա ամրոցի եւ Վանստանի վերը նշված առնչությունը պատահական չէ: Վանքի երկու արձանագրություններում բերդի տերերը (ԲԵՂՈՅ ԲԵՐԴԻՍ ԲՆԱԿԻՉԸ) մվիրվածություններ են կատարել վանքին:

Թեեւ ուղղակի վկայություն չի պահպանվել Գեղի ամրոցի եւ շրջակայքի պատկանելության մասին 13-րդ դարի 30-60-ական թվականներին, սակայն նկատի ունենալով Գեղարդի, Աղջոց ս. Ստեփանոսի եւ մերձակա Գիլանլար գյուղի մոտ կանգնեցված Գրիգորի Խաղբակյանի 1233թ. խաչքարի արձանագրական հիշողությունները՝ Գարեգին Հովսեփյանը այս տարածքները համարում է Խաղբակյան կամ Պոռշյան իշխանական տան սեփականությունը:²⁵ Որպես լրացուցիչ փաստարկ անվանի հայագետը բերում է Վանստանի վանքի խաչքարերից

¹⁷ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Մաքեմյան, Երեւան, 1984, էջ 556:

¹⁸ Նույն տեղում: էջ 556-557:

¹⁹ Հ. Անադյան, Հայոց անձնանունների բառարան, հ.1, էջ 578:

²⁰ Վարդան վարդապետը միջնադարյան Հայաստանի մեծ մտածող, պատմիչ, գիտնական Վարդան Արեւելցին է:

²¹ Գ. Հովսեփյան, Չազավանից ժողովը, «Շողակաք», գիրք առաջին, Վարդաշապուհ, 1913 թ. էջ 22-46:

²² 1669 թ. Չաքարիա Ագուլեցին եղբոր՝ Շմավոնի հետ վճռում են նորոգել Խոր Վիրապի վանքը: Մարքման աշխատանքների միջոցին բացվում են երկու տապանաքարեր, որոնցից մեկը, ըստ Ագուլեցու՝ թվագրված է եղել 1268 թ., մյուսը՝ տաս տարվա տարբերությամբ: Տապանաքարերում նշված են եղել Ներսես եւ Վարդան վարդապետների անունները: Բացառված չէ, որ այս երկուքը պատկանել է Վարդան Արեւելցուն: Տես Չաքարիա Ագուլեցու նշեցությունը, Երեւան, 1938, էջ 80-81:

²³ Յովհաննես Կարադիկյանի Դրասխանակերտցույ Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 356-359:

²⁴ Արձանագրության թվականը ճշգրտել է վիմագրագետ Ս. Ավագյանը: Տե՛ս Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառարանություն, էջ 284-285:

²⁵ Գ. Հովսեփյան, Խաղբակյանը..., մասն Ա, էջ 62-67: Խաչքարը այժմ գտնվում է Էջմիածնի վանքի բակում:

մեկին փորագրված հիշատակագիրը. «ՍՈՒՐԲ ԽԱՉՍ ԲԱՐԵՆԱԿՍ ՊԱՐՈՆ ԹԱՆԵՐԻՆ» վերջինս նույնաց-
նելով Պռոշյան նշանավոր իշխան Ամիր-Հասան Ա-ի կնոջ՝ իշխանուհի Թաների հետ:²⁶

Մադուն Արծրունու Վանստանի վիմագրական վկայությունները ցույց են տալիս, որ այս տարածքը, եթե
անգամ 13-րդ դարի առաջին կեսին պատկանել է Պռոշյաններին, ապա նույն դարի երկրորդ կեսին, համեմայն-
դեսպա՝ 70-80-ական թվականներին, գտնվել է Մահկանաբերդի մեծ իշխանի տիրապետության տակ:

Սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հետագայում այս տարածքները վերադար-
ձել են Ջաքարյաններին, որոնց վերջին շառավիղները պատմության թատերաբեմից հեռացան 14-րդ դարի 60-
ական թվականներին²⁷:

Վանստանի վանքի վերաբերյալ մատենագրական վկայությունների սակավությունը մեծապես լրացնում
են հիմնականում Աշխ. Բալանթարի կողմից հայտնաբերված ու վերածնված վիմագիր արձանագրությունները:
Դրանց մի մասը նվիրագրել է, արի համաձայն վանքը որպես նվիրատվություն ստացել է մեծ բանակությամբ
դրամ, հողակտորներ, ազգի, մարգ, առու, ոչխարներ եւ այլն:

Այս արձանագրություններից առանձնանում է Գիշուկ եւ Սիսիկ ամուսինների նվիրագիրը: Ըստ որի
նրանք վանքին նվիրել են 40 դահեկան, որի դիմաց առաջնորդ Տեր Գորգը եւ մյուս միաբանները սահմանել են
տարին երկու պատարագ մատուցել Սուրբ Խաչի սուրբին: Արձանագրությունը թվագրված չէ, ուստի դժվարանում
ենք որոշել Գորգ վանահոր ժամանակը:²⁸

Վանստանի վանքի ուշագրավ վկայություն է պահպանվել Թովմա Մեծովեցու «յիշատակարան»-ում: ՀԱ
եկեղեցու պատմության մեջ հիշարժան է 1441 թ.: Այս թվականին տեղի ունեցավ կաթողիկոսական աթոռի վերա-
դարձը Սսից Վաղարշապատ: Այդ արարողությունը նշանավորվեց նոր կաթողիկոսի ընտրությամբ: Շուրջ եւեր
հարյուր վարդապետներ ու եպիսկոպոսներ ժողով գումարեցին Երևանում, ապա Վաղարշապատում: Երկարա-
տևյալ գավառից էր: Թովմա Մեծովեցին պատմում է, որ նա դեռևս 1409 թ. եկել է միաբանել է սկզբում՝ Խոր
Վիրապի վանքին, այնուհետև տեղափոխվել Վանստան. «... երեսուներկու ամառ յառաջ եկեալ ի գաւառն իւր-
մէ, եկեալ ի սուրբ ուխտն ... ի Վիրապին, եւ անտի առանձնացեալ ի յանապատն Վանստայ...»²⁹:

Վանստանի վանքը եւս մի անգամ հիշատակվում է Աղջոց ս. Ստեփանոս վանքում 1460 թ. Գալուս արեղ-
յանի ընդօրինակած ավետարանի հիշատակարանում. «... յիշեսցիք ըստ հոգւոյ հարազատ եղբարն մեր գաւեր
Մանուէլն, որ ըստացաւ զսա ի հալալ արդեանց յիշատակ իւրոց զսուրբ Աւետարանս, յիշատակ իրեանց սուրբ
աթոռոյն, եւ Վանստանայ սուրբ Աստուածածնին...»³⁰: Հիշատակարանից պարզ է դառնում, որ Տեր Մանուէլը
Աղջոց ս. Ստեփանոսի վանքում պատվիրել է ձեռագիր ավետարան եւ այն նվիրել Վանստանի վանքին:

Հիշատակարանի վանքում գրիչ Գալուստ Արեղան ցանկանում է, որ հիշեն ոչ միայն պատվիրատու տեր
Մանուէլին, այլեւ նրա ծնողներին՝ պարոն Սիրգային եւ Խոնքուշին, նաեւ հորեղբորը՝ Շրվանշահին: Վանստանի
խաչքարերից մեկի թվին փորագրված է ՍՈՒՐԲ ԽԱՉՍ ԲԱՐԵՆԱԿՍ Է ՄԻՐՁԻՆ, իսկ 1499 թ. մեկ այլ խաչքա-
րի հիշատակագիր վերաբերում է ՊԱՐՈՆ ՇՐՎԱՆՇԻՆ: Կարծում ենք, որ այս վիմագրերում հիշված անձինք
նույնն են, իսկ նախորդ ձեռագրի հիշատակարանում վկայված պարոն Սիրգան եւ Շրվանշահը:

Ավելի ուրջ Վանստանը վկայված է 1560 թ. Հայրապետ եպիսկոպոսի պատվերով ընդօրինակված Մաշ-
տոցի հիշատակարանում. «Արդ գրեցաւ թուականութեա հայոց ՌԹ ի երկիրս արարապայան, ի ձորս Քեղոյ ի
վանքս որ կոչի Վանքստան ի դուռս սբ Ածածնիս, եւ այլ բազմահաւաք սրբոցս, որ աստ կան հանգուցեալ»³¹: Չե-
ռագրի ընդօրինակողն է «Մակաւ ծրադս Խաղս...»³²:

1912թ. պեղումների ժամանակ եկեղեցու հարավային կողմում հայտնաբերվեց մի տապանաքար, որի վրա
փորագրված էր. ԱՅՍ Է ՀԱՆԱԿԻՍ ԽԱՂ Է ՊԻՍԿՈՊՈՍԻ: Նկատի ունենալով Խաղ անձնանվան եզակիությ-
յունը եւ միջավայրի նույնությունը, գտնում ենք, որ Վանստանում թաղված Խաղ եպիսկոպոսը վերելում նշված
ձեռագրի ընդօրինակողն է, թերեւս վանքի առաջնորդներից:

Մատենագրական եւ վիմագիր սկզբնաղբյուրների բնությունը ցույց է տալիս, որ արդեն 16-րդ դարի վեր-
ջին կամ 17-ի սկզբին վանքը ամբողջովին կամ մասամբ դադարել էր գոծելուց: Այս կապակցությամբ կարելի է
է 1997 թ. մեր կողմից հայտնաբերված խաչքարը: Դատելով հարդարանքից՝ այն եկեղեցու զմբեթի թվի բանդա-
կագարդ քարերից է, որը ենթարկվել է երկրորդական օգտագործման թիկունքի կրաշաղախով պատված մակե-
րեւր հղկվել - հարթեցվել է եւ վեր է ածվել խաչքարի: Խաչքարի փորագրված արձանագրությունը հավաստում է,
որ այն կերտվել է ոմն Սարգսի հոգու փրկության համար՝ 1597 թ.: Այս ուշագրավ գտածոն լուրջ կռվան է այն

վաստի օգտին, որ այդ թվականին ս. Աստվածածին եկեղեցին կամ առնվազն նրա զմբեթը արդեն փլված էր:
Խնդրո առարկա հարցի վերաբերյալ անողղակի վկայության ենք հանդիպում 1608թ. մի ձեռագրի հիշատակա-
րանում նկարագրվում է Շահ Աբասի արշավանքը եւ ավերածությունները: Գառնիի ձորում ու շրջանում տեղի ու-
նեցած վայրագությունները նկարագրելիս գրիչը թվարկում է քարայրներում եւ անմատչելի ծերայերում թաքնված
եւ հետագայում տանջամահ արված հոգեւորականներին. «...Մանուէլ եպիսկոպոս Հայոց Թառայ եւ Աստուա-
ծատուր ի Գեղարդեան վանից եւ տէր Եղիայ ի յԵրեւան քաղաքէ»³³: Այս շարքում Վանստանի առաջնորդը չի
նշված, կարծում ենք այն պատճառով, որ նա արդեն ավերված էր եւ չէր գործում: Նույն գրիչը մերձակա լեռնա-
զանգվածը կոչում է վանքի անունով. «... ի յամուր լերինք Գառնոյ եւ Այրիվանից եւ Վանստանայ...»³⁴:

Այս անցքերի հետ կապված՝ Առաքել Դավրիժեցին մանրամասն ներկայացնում հայոց մեծ տարագրու-
յունը եւ դրան հաջորդած սովը (1606-1609 թթ.), Գառնիում եւ շրջակա գյուղերում կատարված վայրագություննե-
րը, ժողովրդի բռնազաղթը, որոնց արդյունքում նշվածքը աստիճանաբար հայթափվում է եւ բնակեցվում օտա-
րածին խաշնարած ցեղերի կողմից:³⁵

Միջնադարյան Հայաստանում ոչ հազվադեպ երևույթ էր, երբ տվյալ վանական հաստատության անունը
փոխանցվում էր այն բնակավայրին, որտեղ կամ որի մերձակայքում գտնվում էր այդ վանքը: Այդպես է եղել
նաեւ մեր օրինակում: Հայոց կաթողիկոս, պատմագիր Միմեն Երեւանցին ներկայացնելով Խոր Վիրապի վան-
քին հարկատու գյուղերի ցանկը, գրում է. «... ունի գլխակա յերեկոյս Երեւանու գՎեթի, գԱրկունի, գԱրտաշար,
գՄուշաղբիւր, գՋողուն, գՎանքստան, գՄանկուս...»³⁶:

Վանստանի վանքը, ամենայն հավանականությամբ, վերջնականապես ավերվել է 1769թ. աղետալի երկ-
րաշարժի ժամանակ:

У. МЕЛКОНЯН, Г. САРКИСЯН — Монастырь Ванстана. Монастырь Ванстан является од-
ним из наиболее известных духовных центров средневековой Армении. Он находится в Хосровс-
ком заповеднике Араратской области. Был основан в первой четверти XIII в. при владычестве
атабека Иване Закаряна. Главное сооружение монастыря – церковь св. Богородицы, отличается
великолепными барельефами и множеством эпиграфических надписей. Памятник впервые был
раскопан и изучен известным арменоведом Ашхарбеком Калантаром в 1912 году.
С историей монастыря связаны имена таких выдающихся деятелей средневековой Арме-
нии как Иване Закарян, Садун Арцруни, княгиня Тачер, историк Вардан Аревелци, архиепископ
Григор Бджнепи, католикос Киракос Вирапеци и другие. Большую научную ценность предств-
ляют сохранившиеся эпиграфические надписи.

²⁶ Նույն տեղում, էջ 65:

²⁷ Լ. Բաբայան, Հայաստանի սոցիալ-տնտեսական եւ քաղաքական պատմությունը 13-14-րդ դարերում, Երեւան, 1964, էջ 352:

²⁸ Արձանագրության տառածները հարազատ են 12-14-րդ դարերին, իսկ Գիշուկ անձնանունը մի քանի անգամ հիշված է 13-15-րդ դարերի արձանագրություններում:

²⁹ Թովմա Մեծովեցու Յիշատակարանը, հրատարակեց իւր առաջաբանով Կարապետ Կոստանյանց, Թիֆլիս, 1892, էջ 54:

³⁰ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ.3, կազմեց Լ. Խաչիկյան, Երեւան, 1967, էջ 435:

³¹ Գ. Յովսեփեան, Խաղրակեանք..., հ.4, Նիւ Էռքը, 1943, էջ 125:


³² Նույն տեղում:

³³ Հայերեն ձեռագրերի ԺԵ դարի հիշատակարաններ, հ.Ա, կազմեցին՝ Վ.Հակոբյան, Ա.Հովհաննիսյան, Երեւան, 1974, էջ 287:

³⁴ Նույն տեղում:

³⁵ Առաքել Դավրիժեցի, Պատմություն, բարգմանությունը, առաջաբանը եւ ծանոթագրությունները Վ.Առաքելյանի, Երեւան, 1988, էջ 48-52, 74-75 եւ այլ:


³⁶ Միմեն Երեւանցի, Ջամբո, Վաղարշապատ, 1873, էջ 280:




Ս. Աստվածածին եկեղեցու շինարարական արձանագրության հատված
Լուսանկարը 1912 թ.



Մուսրի ճակատակալ քար



Մ. Աստվածածին եկեղեցին արևելքից



Մ. Աստվածածին եկեղեցու բնամուկի բար